AUA Հայաստանի Ամերիկյան Համալսարան

Բակալավրի ընդունելություն

ՁԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՄԵՐ ԴՌՆԵՐԻՑ

Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ) դիմելը կարող է շփոթեցնող թվալ, բայց այդպես չէ: Ընդունելության գրասենյակն այստեղ է Ձեզ օգնելու համար: Կարդացե՛ք ստորև նշված ուղեցույցը: Ցանկանու՞մ եք իմանալ ավելին: Ուրեմն կարող եք անհատական հանդիպում նշանակել ընդունելության գրասենյակի աշխատակցի հետ:

Ինչպե՞ս դիմել:

1 *Այցելեք ՀԱՀ-ի առցանց դիմում-հայտերի կայք՝* ***im.aua.am***

2 *Ընտրեք* ***New User Registration***

3 ***Ստեղծեք*** *Ձեր էջը*

4 *Մուտք գործեք Ձեր էջ և ընտրեք* ***Submit an Application for Admission to Undergraduate Study***

Ընդունելության պահանջները

- Ներկայացրեք **ամբողջական դիմում-հայտ***՝ ներառյալ բոլոր պահանջվող փաստաթղթերը
- Ներկայացրեք **ավագ դպրոցի ավարտական վկայական** կամ դրան համարժեք փաստաթուղթ**
- Ներկայացրեք **անգլերեն լեզվի իմացության ապացույցը** հետևյալ տարբերակներից մեկի միջոցով.
  - TOEFL iBT կամ TOEFL iBT Special Home Edition թեստեր
  - IELTS Academic կամ IELTS Academic Indicator քննություններ
  - Անգլերեն լեզվի իմացության թեստից ազատվելու դիմում
- Ներկայացրեք **մաթեմատիկայի իմացության ապացույցը*** հետևյալ տարբերակներից մեկի միջոցով.
  - SAT
  - ACT

*Դիմում-հայտերը ամբողջական չեն համարվում, եթե ընդունելության գրասենյակը չի ստացել ընդունելության քննությունների պաշտոնական արդյունքները:
**Ընդունելության գրասենյակը հաստատում է միայն ընդունված դիմորդների ավարտական փաստաթղթերը ընդունելության գործընթացից հետո:
***Աշուն 2022 ընդունելության համար մաթեմատիկայի իմացության քննությունն ընտրովի է Անգլերեն և հաղորդակցություն ու Քաղաքականություն և պետական կառավարում ծրագրերի համար:

Աշուն 2022 ընդունելության դիմում-հայտի ընդունման վերջնաժամկետներ*	Վաղ ընդունելություն	Կանոնավոր ընդունելություն	Շարունակելի ընդունելություն**
Համոզվեք, որ ներկայացրել եք ամբողջական դիմում-հայտը և հանձնել եք պահանջվող բոլոր քննությունները մինչև դիմում-հայտի վերջնաժամկետի օրը ներառյալ:	**դեկտեմբեր 1, 2021**	**մարտ 1, 2022**	**հունիս 1, 2022**

*Վերջնաժամկետները կարող են փոփոխվել: Որոշ SAT և ACT թեստեր, որոնց հանձնման օրերը սահմանված են վերջնաժամկետից մի քանի օր անց՝ չեն հանգեցնի վերջնաժամկետի փոփոխության: Այցելե՛ք **https://admissions.aua.am/ugrad/deadlines/?lang=hy** հղումով՝ թարմացումներին ծանոթանալու համար:
**Շարունակելի ընդունելության վերջնաժամկետի դիմորդները պետք է բավարարեն թիրախային գնահատականների շեմը: Դիմում-հայտերը կդիտարկվեն տեղերի առկայության պարագայում:

Արդեն ներկայացրել եմ իմ դիմում-հայտը: Որո՞նք են իմ հետագա քայլերը

- Դուք ավտոմատ կերպով կստանաք հաստատող նամակ **ums@aua.am** էլեկտրոնային հասցեից:
- Առցանց դիմում-հայտը հանձնելուց հետո Ընդունելության գրասենյակը տեխնիկապես կդիտարկի այն՝ վերջնաժամկետի օրից մինչև 6 շաբաթվա ընթացքում:
- Հաճախակի ստուգե՛ք Ձեր էլեկտրոնային փոստը:
- Եթե Ձեր դիմում-հայտը համարվի ոչ ամբողջական, մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ նշելով բացակայող տվյալները կամ փաստաթղթերը, որոնք պետք է անմիջապես ուղարկել:
- Եթե Ձեր դիմում-հայտն ամբողջական է, սպասե՛ք ընդունելության մասին որոշմանը: Այն կուղարկվի էլեկտրոնային նամակով, համապատասխան վերջնաժամկետից մոտավորապես 12 շաբաթ անց:

Այցելեք Հաճախակի տրվող հարցերի կայք-էջը ստորև նշված հղումով՝ բազում հարցերի պատասխաններ ստանալու համար:

https://admissions.aua.am/ugrad/faqs/?lang=hy

Ընտրությունը

ՀԱՀ-ն իրականացնում է համապարփակ ընդունելություն: Նախապես ստուգվում է յուրաքանչյուր դիմումի՝ ընդունելության պահանջների համապատասխանությունը, որից հետո ընդունելության հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրում և քննարկում է ընդունելության պահանջները բավարարող ամբողջական դիմումները: Ընտրության գործընթացը կարող է ներառել նաև հարցազրույց: Քանի որ ՀԱՀ-ի ընդունելությունը մրցակցային է, հանձնաժողովը հաշվի է առնում դիմորդի.



Թիրախային գնահատականներ

Ներկայացված թիրախային գնահատականները միայն տեղեկատվական բնույթ են կրում: Պետք է հաշվի առնել, որ ներկայացված թիրախային միավորներին բավարարելը կամ գերազանցելը չի հանդիսանում ընդունելության երաշխիք: Միևնույն ժամանակ, թիրախային միավորները չհաղթահարելու դեպքում, Ձեր դիմում-հայտը կարող է դիտարկվել պայմանական ընդունելության համար: Սակայն, մեխանիկորեն մերժման շեմին հավասար կամ ավելի ցածր գնահատական ներկայացնելու դեպքում, դիմորդի ընդունելությունը ՀԱՀ միանգամից մերժվում է: Մանրամասների համար այցելե՛ք **https://admissions.aua.am/ugrad/selection/?lang=hy** կայք-էջ:

Անգլերեն լեզվի իմացություն

TOEFL iBT: **79**	IELTS Academic: **6.5**

Մաթեմատիկայի իմացություն

	Գործարարություն	Անգլերեն և հաղորդակցություն Քաղաքականություն և պետական կառավարում	Համակարգչի գիտություն Ճարտարագիտություն Տվյալագիտություն
SAT	**650**	**510**	**670**
ACT	**27**	**19**	**28**

2021 թվականի ընդունելության միջին գնահատականները

Աշուն 2021 ընդունելության տոկոսը կազմել է ***61.8%***: Չնայած վերը հրապարակված թիրախային միավորներին՝ ընդունված դիմորդների քննությունների միջին գնահատականները հնարավոր է ավելի օգտակար լինեն: Ներքևում ներկայացված են 2021 թվականի ընդունված դիմորդների քննությունների միջին գնահատականները: Այս արդյունքներն ավելի բարձր են թիրախային միավորներից: Քանի որ ՀԱՀ ընդունելությունը տարեցտարի ավելի մրցակցային է դառնում, լա՛վ սովորեք և հնարավորինս լավ գնահատականներ ստացեք:

	Գործարարություն	Անգլերեն և հաղորդակցություն	Քաղաքականություն և պետական կառավարում	Համակարգչի գիտություն	Տվյալագիտություն	Ճարտարագիտություն
TOEFL iBT*	**91.6**	**92.6**	**91.2**	**95.8**	**97.3**	**93.5**
IELTS*	**6.8**	**7.1**	**6.8**	**7.2**	**6.9**	**6.7**
SAT	**710**	**624.5**	**639.3**	**750.2**	**755.3**	**751.3**
ACT	**25**	**24.7**	**33.2**	**31.7**	**25**	**32****

*Ներառում է TOEFL Home Edition և IELTS Indicator թեստերը:
**Աշուն 2020 տվյալներ:

Միջոցառումների օրացույց

Այցելե՛ք **admissions.aua.am/calendar** կայք-էջ բոլոր առցանց և համալսարանում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև գրանցվելու ընթացակարգի մասին տեղեկանալու համար, որոնք ավելի լավ կուղղորդեն Ձեզ դիմելու ընթացքում: Հիշեք նաև, որ Դուք կարող եք դիմել մեզ անհատական խորհրդատվության կամ ՀԱՀ-ում շրջայցի մասնակցելու համար:

Բաց դռների օր

Մեկօրյա ծրագիր, որը ներկայացնում է՝

- Կրթական ծրագրերը
- Ընդունելության գործընթացը
- Ֆինանսական օժանդակությունը
- ՀԱՀ շենքային հարմարությունները
- Եվ ավելին

Տեղեկատվական միջոցառումներ

Մեկ ժամանոց միջոցառումներ, որոնք ներկայացնում են՝

- ՀԱՀ-ը
- Դիմում-հայտի լրացման կարգը
- Ֆինանսական օժանդակությունը
- Շարադրություն գրելու կարգը
- Ընդունելության հարցազրույցի պատրաստման կարգը

Բաց դասեր

Իրական դասեր, որոնցով կարող եք բացահայտել ՀԱՀ-ի կրթական կյանքը:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Մարշալ Բաղրամյան 40
Երևան, 0019, Հայաստան
+374 60 69 40 40
aua.am

Ընդունելության գրասենյակ
108Մ սենյակ
+374 60 61 27 50
Դիմեք im.aua.am
ugrad@aua.am
admissions.aua.am/ugrad

Ֆինանսական օժանդակության գրասենյակ
304Մ սենյակ
+374 60 69 40 40 ext. 2
financialaid@aua.am
finaid.aua.am

Սոցիալական ցանցեր
/AUAAdmissions
/AUArmenia
/aua_insta
/AUAuploads
/@AUAtweets

V04 09/21

Հայաստանի ամերիկյան համալսարանը հավատարմագրված է ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի (WASC Senior College and University Commission) կողմից՝ 1001 Marina Village Parkway, Suite 402, Alameda, CA 94501, 510.748.9001, **www.wscuc.org**: ՀԱՀ-ը նաև համագործակցում է Քալիֆորնիայի համալսարանի հետ: